



Դասընթաց՝

Բաց կառավարումը, նորարարությունը և էլեկտրոնային կառավարման գործիքները գործադիր և տեղական գործընթացներում

Մասնակիցներին կտրվի հավաստագիր

Մասնակցության համար գրանցվել այստեղ՝

https://docs.google.com/forms/d/1aaOHiRTX_k7f-Ak6ueJNCwmOJLEh7HxuH60u9OORMxl/edit

«Բաց կառավարումը, նորարարությունը և էլեկտրոնային կառավարման գործիքները գործադիր և տեղական գործընթացներում» վերապատրաստման դասընթացը նախագծվել է բաց կառավարման և էլեկտրոնային կառավարման ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, համայնքային ենթակայության առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների կարողությունները զարգացնելու նպատակով:

Դասընթացն իրականացվում է ՄԱԶԾ Կոլբա Լաբի «Ապագան այսօր. կանանց, երիտասարդների և երեխաների հզորացում հանուն Հայաստանում ժողովրդավարության ամրապնդման» ծրագրի շրջանակում ԲԿԳ-Հայաստան քարտուղարության հետ համատեղ՝ ԵՄ ֆինանսավորմամբ:

Դասընթացը կազմված է 2 հիմնական թեմատիկ ուղղություններից՝

1. Բաց կառավարումը գործադիր և տեղական գործընթացներում
2. Նորարարությունը և էլեկտրոնային կառավարման գործիքները ՀՀ-ում՝ ներկյան և ապագան

Տեսական և գործնական պարապմունքների ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալ Բաց կառավարման գործընկերության սկզբունքներին և գործընթացներին, Հայաստանի Հանրապետությունում ներդրված էլեկտրոնային կառավարման գործիքներին և դրանց գործնական կիրառությանը, կառավարման գործընթացներում նորարարությանը:

Դասընթացի ավարտին մասնակիցները՝

1. Կտիրապետեն «Բաց կառավարման» հասկացությանը, դրա գործիքակազմին ինչպես գործադիր շրջանակներում իրականացվող գործընթացներում, այնպես էլ՝ տեղական մակարդակում:

2. Կտիրապետեն որոշումների կայացման իրավունքների, տեղական մակարդակում քաղաքականությունների մշակման մասնակցության, բարեվարքության, գնումների գործընթացի կարևորության, համայնքային ծառայությունների պատվիրակման և այլ նորարար մեխանիզմների մասին:
3. Իրազեկ կլինեն Հայաստանում ԲԿԳ շրջանակներում և ոչ միայն, գործող էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ժողովրդավարության գործիքների մասին, գիտելիքներ և հմտություններ կունենան նշված գործիքներից արդյունավետորեն օգտվելու համար:
4. Հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով դիմել պետական և տեղական մարմիններին, ներկայացնելու բողոքներ և առաջարկություններ, ամրագրելու այցելություններ, ներկայացնելու հանրագրեր և հետևելու դրանց ընթացքին:
5. Կունենան բավարար իրավական գիտելիքներ տեղեկատվության ազատության մասին օրենսդրության, էլեկտրոնային հարցումների ընթացակարգերի, այս ոլորտում նրանց իրավունքների, պետական մարմինների պարտականությունների վերաբերյալ: Կկարողանան կիրառել էլեկտրոնային հարցումների միասնական e-request.am հարթակը
6. Կունենան e-draft.am կայքը օգտագործելու բավարար գիտելիքներ և հմտություններ, հնարավորություն կունենան որոնել, գտնել, ուսումնասիրել, կարծիքներ ներկայացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային քննարկման ներկայացված նախագծերի վերաբերյալ, գրանցվել համակարգում, բաժանորդագրվել, ուսումնասիրել և վերլուծել վիճակագրությունը:
7. Կունենան բավարար իրավական գիտելիքներ իրավական ակտերի ընդունման կարգի, հանրային քննարկման կանոնների, այս ոլորտում նրանց իրավունքների, պետական մարմինների պարտականությունների վերաբերյալ
8. Կունենան բավարար գիտելիքներ և հմտություններ Հանրագրերի միասնական e-petition.am համակարգը օգտագործելու համար՝ հանրագրեր ներկայացնելու, այլ անձանց կողմից ներկայացված հանրագրերին միանալու, հանրագրեր որոնելու, վիճակագրությունն ուսումնասիրելու և վերլուծելու համար:
9. Դասընթացի ավարտին մասնակիցները ոչ միայն կտիրապետեն էլեկտրոնային կառավարման գործիքներից օգտվելու գիտելիքներին և հմտություններին, այլև կունենան վստահություն էլեկտրոնային գործիքների նկատմամբ:
10. Մասնակիցները կունենան համապատասխան մոտիվացիա՝ պետական կառավարման համակարգին մասնակցելու համար էլեկտրոնային գործիքներ օգտագործելու համար:

Դասընթացները կիրականացվեն հեռահար՝ [Zoom](https://zoom.us) հավելվածի միջոցով :

Դասընթացի տևողությունը՝ **4 ակադեմիական ժամ:**

Դասընթացի ավարտին մասնակիցներին կտրվեն [հավաստագրեր](#)՝ Վարչապետի աշխատակազմի ԲԿԳ քարտուղարության և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից:

Դասընթացավարներ



Սուրեն Քրմոյան

Հասարակական և պետական գործիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, հանրային կառավարման և թվայնացման ոլորտի մասնագետ: Սուրեն Քրմոյանը պետական կառավարման ոլորտի երկարամյա փորձ ունեցող մասնագետ է, նախկինում զբաղեցրել է Փոխվարչապետի խորհրդականի, Արդարադատության նախարարի տեղակալի և Առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնը: Ներկայումս Թվայնացման փորձագիտական թիմի ղեկավարն է, Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության մշակման թիմի անդամ:

krmoyan@yahoo.com ,



Անի Հարությունյան՝ aniharutyunyan1991@gmail.com

Ժողովրդավարության և բաց կառավարման ոլորտի փորձագետ, մարդու իրավունքների դասընթացավար, ֆոնդահայթայթման և ծրագրերի մշակման մասնագետ: Ներկայումս ղեկավարում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հանուն աշխատանքի. հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն» ծրագիրը, ինչպես նաև Արմավիրի զարգացման կենտրոն հասարակական կազմակերպությունում համակարգում է բաց կառավարման գործընկերության ծրագրերը: Բազմիցս միջազգային հարթակներում հանդես է եկել որպես սոցիալական հաշվետվողականության խոսնակ և փորձագետ:

Մարզեր

1. Արմավիրի մարզ - մայիսի 24,25,
2. Արարատի մարզ – մայիսի 26,27
3. Արագածոտնի մարզ – մայիսի 31,1
4. Գեղարքունիքի մարզ – հունիս 2, 3

5. Կոտայքի մարզ և Տավուշի մարզ – հունիս 7,8,

6. Սյունիքի մարզ և Վայոց ձորի մարզ – հունիս 9,10

Դասընթացները կանցկացվեն յուրաքանչյուր մարզում և միավորված մարզերի խմբերում 2 օր: Յուրաքանչյուր օր դասընթացավարները կներկայացնեն իրենց մոդուլները՝ յուրաքանչյուրը 2 ժամ տևողությամբ: Օրինակ (թեմաները ենթակա են հստակեցման դասընթացավարների կողմից)

I-ին օր

9.30 -11.30 – ԲԿԳ գործընթացները գործադիրի և տեղական մակարդակներում

11.40-13.40 – Նորարարությունը և էլեկտրոնային կառավարման գործիքները՝ տեղեկատվության ազատության մասին օրենսդրություն, էլեկտրոնային հարցումների ընթացակարգեր և e-request.am հարթակ

II-րդ օր

9.30 -11.30 – ԲԿԳ միջազգային և տեղական քաղաքական ուղղությունները և առաջնահերթությունները

11.40-13.40 - Նորարարությունը և էլեկտրոնային կառավարման գործիքները՝ e-draft.am պորտալը և Հանրագրերի միասնական e-petition.am համակարգ:

Դասընթացի Zoom հղումը՝ <https://undp.zoom.us/j/81207322597> , Meeting ID: 812 0732 2597